



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

18/մայիսի/2018 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու8... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի նիստի հետևյալ *օրակարգը*.

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ներդրումային ծրագրի շրջանակներում ձեռք բերված գույքը Ջերմուկ համայնքի գույքացանկում ընդգրկելու, «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին օգտագործման տրամադրելու և ՀՈԱԿ-ի կողմից դրանք շահագործելու (վարձակալության տրամադրելու) դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին.

